

ՅԱՍՏԵՐՈՐԻՒՄ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց նամակները մէջ:

Օտարապետացիք զիմում են պղծել:

Тифлис. Редакция «Маск»

Խմբագրությունը բաց է առաջօրե 10—2 ժամ:

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարվում է, որ լուսավորման համար:

Յայտարարվում է խմբագրության կողմից:

Խմբագրությունը բաց է առաջօրե 10—2 ժամ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Դարձեալ խնդրում ենք «ՄԱՍԿ» բաժանարարներին, որոնք մինչև այժմ չեն վճարել մեր լրագրի անցեալ կամ ներկայ տարվայ բաժանորդական վճարը, շուտով հասցնել մեզ իրանց պարտքը:

Մի և նոյն ժամանակ յայտնում ենք որ «Մշակին» կարելի է գրվել երեք ամսով, վճարելով 3 ռուբլ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի պատասխան: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց խնդիր: Արտաքին լուրեր: ՀՆՈՒԿԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիֆլիսից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՊԱՏԱՅԻՄԱՆ

Ընթերցողին յայտնի է որ մի քանի ամիս սրանից առաջ տպվեցաւ մի քանի գերմանական լրագրիչներում, ինչպէս «Դէյտշե Զէյտունգ» և «Ալեմայնե Զէյտունգ», նոյնպէս և անգլիական լրագրիչներում մի յօդուած հայոց խնդրի վերաբերութեամբ, որտեղ, ի միջի այլոց, խօսուած էր և Գրիգոր Արծրունու անձնաւորութեան մասին: Այդ յօդուածը արտատպեց և Կ. Պոլսի «Մասիս» լրագրիչը: Գերմանական «Դէյտշե Զէյտունգ» լրագրի մէջ վաղուց է արգէն որ տպվեցաւ «Մշակին» խմբագրի կարծ պատասխանը գերմաներէն լեզուով, իսկ «Մասիս» գեղ. օգոստոսի 13-ին ուղարկված պատասխանը տպվել է այդ լրագրի օգոստոսի 28-ի (սեպտեմբերի 9-ի) համարի մէջ, որ միայն այս օրերս ստացվել է Թիֆլիսում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԻԼԻՍԻՑ

Կ. Պոլսի, 20 սեպտեմբերի

«Մշակի» 162 թիւ խմբագրականին մէջ առաջնորդող յօդուած մը տեսանք «Ար» է այն ձայնը, որոյ պարունակութիւնն այնքան գրեւծ գնեց և մեր ուշադրութիւնն որ պարտաւորութիւն համարեցինք հրապարակելն և տեսնել այն հաշիւը ձեր գործողներու հետ, զորս շատոնց անդի մեր փափաքն եղած էր:

Ձեր լրագրող յիշեալ համարէն՝ ինչպէս կենթադրենք, ուստիայ երկրասարգութիւնը շատ մեծ հաճոյք չի գտար ձեր աշխատակցի, և մեր իրաւ յարգած պ. Գրիգոր Նիկողոսեանի և Պոլսի գործող մարմնից վերաբերմամբ բռնած կողմով, խիստ սակայն 90/100 ձայնարտ և արդարացի ընթացքէն, սակայն եթէ չենք սխալվել մեր տեսութեան մէջ, մեզ շնորհեցէ մի պահ որ խօսքը զայն, ինչ որ ի վաղուց անտի ծանրացման կը ձայնէ մեր կուրծքն հայրենասիր:

Նախ զարմանօք պիտի գիտնէք որ ամբողջ ուստիայ երկրասարգութեան մէջ եթէ գտնուէր այնպէս մտածող հինգ հոգի թէ, պէտք է փախուստ տալ վիճարարութիւններէ, բանակութիւններէ և յարձակումներէ ազգային ապիկար գործողներու վերաբերմամբ, այդ ալ մեր տեսնու:

Այդ հերքման մէջ Գրիգոր Արծրունին պատասխանում է միայն այն սխալներին և զրպարտութիւններին, որոնք վերաբերվում են յատկապէս իր անձնաւորութեանը, անկատարական թողնելով գերմանական յօդուածի այն տեղերը, որոնք չափից դուրս անմիտ, անհասկանալի, անհաստատելի և հրէշաւոր լինելով, արժանի էլ չեն պատասխանի:

Ահա «Մասիս» մէջ տպված Գրիգոր Արծրունու պատասխանի գլխաւոր տեղերը: «Նորերումս վիեննայի» «Դէյտշե Զէյտունգ» գերմանական լրագրիչը տպել է մի յօդուած «Հայոց խնդիր» առիթով, որի մէջ յիշեալ կար և իմ ազգանունս: Այդ յօդուածը արտատպել է գերմանական «Ալեմայնե Զէյտունգ», անգլիական «Սթրանգեր» և շատ ուրիշ լրագրիչներ, նոյնպէս և յարգելի «Մասիս» լրագրիչը: Վիեննայի գերմանական լրագրին եւ արգէն պատասխանեցի մի նամակով, այժմ հարկաւոր եմ համարում և ձեզ ուղղել մի քանի տող, յիշեալ յօդուածի մէջ եղած մի քանի սխալներ զրոստելու համար:

«Ուղիղն այն է միայն, որ ես հիմնել եմ տաս տարի առաջ և շարունակում եմ հըրատարակել իմ սեփական միջոցներով «Մշակ» հայերէն լրագրիչը, հրատարակել եմ մի քանի բրոշուրներ և յօդուածներ ուսերէն և գերմաներէն լեզուով հայոց խնդրի մասին, իմ կարողութեան չափ միշտ նպաստել եմ և մինչև վերջին շունչս պէտք է նպաստեմ իմ սիրելի ազգի առաջադիւնութեանը, ունեւ կառուցած Թիֆլիսում մի սեփական փոքրիկ թատրոն, թէև սխալ է որ ես իմ հաշուով բերել առեւծ լինէի մի թատրոնական խումբ: Ուղիղ է նոյնպէս որ ես իմ կրթութիւնս ստացել եմ Գերմանիայում և 1869 թւին Հայդելբերգի

համալսարանում հարցաքննութիւն տալով, արժանացալ այդ համալսարանի դոկտորի տիտղոսի: Բայց հիմնովին ըսեալ է, որ ես ծանօթ լինէի վիկտոր Հիւգօի, Կոստելարի կամ Գարիբալդիի հետ, այդ երեւելի անձանց հետ եւ երբեք պատիւ չեմ ունեցել ծանօթ լինելու: Նոյնպէս սխալ է, որ հայերէնի վերադարձած լինելով եւ երթարկված լինելի քաղաքական դատի, իր թէ որպէս պետական մասնիչ: Այդտեղ յօդուածագիրը ինձ երեւի խառնել է մի այլ անձնաւորութեան հետ, այն է մեր յայտնի բանաստեղծ և հեղինակ Միքայէլ Նալբանդեանի հետ...

Ինչ որ վերաբերվում է իմ նիւթական կարողութեանս, եւ միայն այսքան կասեմ, որ յօդուածագիրը սխալվում է համարելով ինձ մի լի օն առ էր: Ես միլիոններ չունեմ և շատ ցաւում եմ որ այդքան հարուստ չեմ: Եթէ ես այդքան հարուստ լինէի, որքան ինձ կարծում է գերմանական լրագրի յօդուածագիրը, եւ ցոյց կը տայի մեր հարուստներին թէ ինչպէս կարելի է գործածել միլիոններ մի ընտանեացած ազգին օգնելու համար: Ես գործում եմ իմ կարողութեան չափ առանց հարստութեան, բայց եթէ ես ձշմարիտ միլիոններ ունենայի, եւ կամայեցնէի մեր հարուստներին նրանց աններելի ետակարութեան, նրանց յանցաւոր անտարբերութեան համար դէպք ազգի կարիքները:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ՆՈՒԹՈՒՑ: «Այժմ էլ մեր ուսումնարանի հոգաբարձութիւնը երկու ուսուցիչ է հրաւիրում, իւրաքանչիւրին 700 ռուբլ խոստանալով: Գուցէ վաղն էլ 1000 ռուբլ խոստանայ: Ի՞նչ փոթ, դատարկ խօսքով ամեն

բան կարելի է խոստանալ, թէն փող էլ չունի զպրոցը:

ԱԽԱՆԴԱՔԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 3-ից որ Երզն մի ամսից աւելի արդեալ տիրում է Կօկլիւն և կարմրուկ հիւանդութիւններ, մասամբ էլ բկացաւ: Մասնաւոր մանուկներից շատերը մեռնում են: Իւրաքանչիւր օր 3 մինչև 4 հոգի մանուկներից զոհ են գնում այդ հիւանդութիւններին: Յաւային այն է որ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում այդ հիւանդութիւնների վրա, աւելացնում է մեր թղթակիցը: Որքան անգամ, ատում է թղթակիցը, մեզանում քաղաքային բժիշկ ունենալու անհրաժեշտութեան վրա դարձել ենք հասարակութեան ուշադրութիւնը, բայց մեր խօսքը մնաց միշտ ձայն բարբառող յանապատիւ: Մենք, առհասարակ, ուղղութիւն ունենք մի բանի վրա ուշադրութիւն դարձնել, երբ արդէն ուշ է լինում: Մեր թղթակիցը վերջապէս է նամակը հետեւալ խօսքերով և առաջարկութեամբ: «Ոգուտ քաղեք ներկայի թխուր դասից, համախմբեք մահի դէմ մարքաւորու համար, հրաւիրեք մի բժիշկ և ազգայնով ապահովեք մեր և մեր գերդաստանների կեանքը մահի անաղկաւ այնցեղութիւնների դէմ: Այդ մասին մտածելու պարտաւորութիւնը գրվում է մեր հարուստների վրա: Մեր հարուստ դասակարգը պէտք էր այդ օգուտէտ առաջարկութեան խնդիրովը յանձն առնէր: Եթէ հաշուեք մեր տարեկան վճարները պատահական այլ և այլ բժշկներին, կը տեսնանք մի գումար, որ անամենատ քանք կը լինի այն գումարից, որ պէտք է վճարենք մի սնտազան, քաղաքային լուսնի:

Մեզ գրում են ԱԽԱՆԴԱՔԻՑ որ մի քանի չլիւթայ հայ գիւղերի գիւղական զպրոցներում նշանակվում են վրացի ուսուցիչներ: Թղթակիցը հարցնում է. ինչ օգուտ կարող են տալ այդ վրացիները, չիմանալով մանուկների մայրերին լեզուն:

«Մշակի» խմբագրութիւնը չարունակում է ընդունել բաժանորդագրութիւն վիեննայի «Journal d'Orient» լրագրի համար: Երեկ ստացանք

իրարքն ըլլայ մէն ու միայնակ գործող, նա եւ հանդիպելով այդ կարծեցեալ գործիչներու կողմանէ հաղար ու մէկ խոչնդոտներու, դաւերու, լարերու ու խարդաւանանքներու: Ահա այսպիսի մի ժամանակ է, որ Կ. Պոլսի կը գալ ձեր գործունեայ և արի աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսեան: Պ. Նիկողոսեան իւր եկած օրէն ի վեր, աչքէ անցնելով ազգային գործունեութեան ընթացքը՝ բաւական արագ կերպով բմբռնած կերբի ամենայն ինչ, որպէս մի արթուն ու բանիւրուն հրամանատար, որ միայն մի հայեացքով կարող է իւր աչաց առջև պատկերացնել ամբողջ պատերազմի դաշան իւր ընդարձակ և բազմակողմանի գրութեամբ: Ձեր աշխատակից յարգելի պարոնը անմիջապէս բմբռնած կերբի կրեւած այս ամենը, որովհետեւ, ըմբռնելով ամեն ամիս ինչպէս ծանօթ է մեզ, կը տեսակցէր նա Միացեալ ընկերութեանց և այլ գործող մարմնից ու անձանց հետ, ի հարկէ դիտողութիւններն բարեկամաբար, մեղմութեամբ ու մանրմութեամբ յայտ անելով անոնց, բայց, ինչ արդիւնք ստացաւ նա, և կամ կարող էր ստանալ մարդ մը որ այնքան բմբռնած է ազգային ընդհանուր շահուց կարևորութիւնը, և որ իւրաքանչիւր ապարդիւն կորուսեալ վարկէնի համար ամբողջ մէկ օր անհանգստութիւն կը գցայ: Ի հարկէ այսպիսի մի անձ որչափ ալ բազմահամբեր ու երկայնամիտ լինէր, կամ պէտք էր բոլորովին յուսակաւոր թողուլ անպարէզն և լուս լինէր, կամ պէտք էր սրտով, հոգեւոր ու մտքով ազգային անշէջ կրակով վառուած, թոյնալից լեզուով ու կիճաւոր գրիչով

4 բուրբ մի նոր բաժանորդից, պ. Գաբրիել Սև-
մերդեանից: Առաջվայ 956 թ. 13 կողմ. բաժա-
նորդական գումարի հետ կանի 960 բուրբ 13
կողմ.:

Լուսմ ենք որ ֆրանսիացի երեկի ձեռնածու-
պ. Կազմելով կիրակի օրից, հոկտեմբերի 11-ից
սկսած կը տայ իր ներկայացումները եօթ օր
չարունակ Արծրունու թատրոնում: Սկիզբը ամեն
երեկոյ 8 1/2 ժամին:

ՍՈՒՆՈՒՄԻՅՑ մեզ գրում են: «Թիֆլիսի հա-
գործական ժողովի անդամներից երեքը, որոնց
թուում և անդամներն ապագայի պիտի լինեն
եկան Սուխում, մնացին այստեղ երեք օր, հե-
տագոյն ի միջի այլոց Սուխումից 6 վերստ
հեռավորության վրա գտնվող մի շատ հին կամուրջ,
իսկ հոկտեմբերի 2-ին յատկապես յարգելի հիւ-
րերին տանելու համար եկաւ Պուշկին» անու-
նով ռուսաց շոգենաւը, որ վեր առաւ երեք
գիտնականներին, Օդեսսա նրանց տանելու հա-
մար: Այս թանգագին հիւրերին Սուխումի մէջ
ուրիշ ընդունելութիւն չարին»:

Մեզ գրում են Սուխումից որ այդտեղ տա-
րածված է այժմ փորձարարից ցաւը: Հիւանդա-
ցողները բազմաթիւ են: Թէև երեք բժիշկ կայ
Սուխումի մէջ, բայց նրանցից մինը միշտ տենդով
հիւանդ է, իսկ միւս երկուսները անհոգ են դէպի
իրանց պարտաւորութիւնները:

Պ. Կ. Թէմուրազեանց խնդրում է մեզ յայտ-
նել հետեւեալը: Հաւաքարի Ս. Մարիամեան
օրիորդաց դպրոցի վարչութիւնը, առաջիկայ
կիրակի, հոկտեմբերի 11-ին, առաւօտեան 10
ժամին, պատարագից յետոյ, կը կատարի զըպ-
րոցի գաղութեան տոսն և մի անհայ տարեգա-
ծը: Կարողի վարչութիւնը խնդրում է ծնողնե-
րին, խնամատարներին, բարերարներին և ազ-
գային լուսաւորութեան նախաձեռնողներին
յարգել հանդէսը իրանց ներկայութեամբ: Տա-
րեգարձը յարմարութեան համար կը կատարվի
Հաւաքարի նորարաց Գաղափարի դպրոցի
հանդիման, ուղիղ Պոկրովսկայա գործանոցի հան-
դէպ, պ. պ. Ղազարեանցների տանը, № 7,
իսկ եթէ եղանակը անձրեային լինի, հանդէսը
կը յետաձգվի»:

Ապագայ ռուսացական ժողովի նախապատ-
րաստութիւնները տեսնող կ'ա գ ա գ ռ ո ղ մաս-
նաժողովը ունեցաւ իր առաջին նիստը հոկտեմբե-
րի 6-ին, երեկոյեան 7 ժամին: Ս. Գալանեան
դպրոցում կարգադրող մասնաժողովի անդամնե-
րից հրաժարվեց պ. Արգար Եղիանիսեան, իսկ
պ. Գեորգ Բարխուդարեանցին էլ յայտնեցին,
որ կարեւորութիւն չկար ընտրվելու կարգադրող
մասնաժողովի անդամ, քանի որ նա գործի ինի-
ցիատորն է: Վերջիշեալ երկու անդամների տե-
ղը բռնեցին կանգնիւթաներ. պ. պ. Միքայել
Մարմարեան և Գեորգ Եղանուսով: Մասնաժո-
ղովի ատենապետ ընտրվեցաւ պ. Միքայել Եղ-
անուսովը, օգնական պ. Եղանուսով, գանձա-
պահ պ. Խաչ. Գալանիսեան, և քարտուղար պ.
Արխանգել Գոլանիսեան: Մասնաժողովի հետե-
ւեալ նիստերը լինելու են պ. Եղանուսեանից
տանը, որ սիրով առաջարկեց իր բնակարանը
այդ նիստերի համար:

Թիֆլիսի բժշկանոցը, որ հիմնված է Թիֆլի-

սի քաղաքացիներից ապրիլի 4-ի, 1866 թ-ի յի-
շատակին, հոկտեմբերի 13-ին կը կատարի իր
տարեգարծի հանդէսը, Սիմեան մայր-եկեղեցու
մէջ պատարագի և մաղթանքների: Վերջնապէս
յետոյ, Բժշկանոցի վարչութիւնը այդ մասին
յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, խնդ-
րելով ցանկացողներին յարգել իրանց ներկա-
յութեամբ յիշեալ հանդէսը:

ՔՈՒՐԱՅԻՄԻՅՑ մեզ գրում են: «Արգէն երկու
տարի է շարունակ, տաս, քսան հոգի դեղնած,
թարշամած դէմքով հայ-գաղթականներ անդա-
դար գալիս են Գուրթայա Բաթումի և Փոթիի
կողմերից: Երբ այդ գաղթականները հետ պա-
տահում էք, նրանք ինչքան էլ չարաբոված լինեն
գաղթականութենից, տենդից, ցաւերից, սովից
և ազգատուժենից, այնու ամենայնի դիմում
են ձեզ հարցնելով թէ՞ ինչ լուր կայ Թիւրքաց
Հայաստանից, արդեօք այնտեղի հայերին իրա-
ւունքներ տալիս են թէ ոչ: Մանաւանդ վերջին
օրերը շատացաւ խեղճ հայաստանցի գաղթա-
կանների թիւը Խմելքեթում: Նախ նրանք գալով
Հայաստանից լիցում են յի ծովի ափերը, բայց
այնտեղի վատառողջ կլիմային չը դիմանալով
գալիս են Գուրթայա աշխատանք գտնելու հա-
մար: Այստեղ էլ աշխատանք չեն գտնում և
ծախսում են իրանց ունեցած կոպէկները: Յա-
ւալին այն է որ այդ խեղճերին ոչ ոք օգնող չը
կայ: Ինչ է եղաւ Թիֆլիսի Բարեգործական ընկե-
րութիւնը: Միթէ ամեն քան վերջացաւ մի քա-
նի ընդհանուր ժողովներով և ընկերութեան կա-
նոնադրութեան տպելով: Միթէ ամեն քան ձեռ-
համար էր միայն»:

Մեզ գրում են որ այս տարի Գուրթայի ա-
րական գիմնադարում աւարտեցին չորս հայ
երիտասարդներ, չորսն էլ հայաստանցիք են: Ա-
ռաջիկայ տարին էլ յոյս կայ որ ութը հայախոս
երիտասարդներ կ'աւարտեն: Այս աշակերտները
դիտաւորութիւն ունեն չաթթը մի անգամ հա-
յերէն գրականական երեկոյնք կազմել, որտեղ
կը ծանօթանան հայոց պատմութեան, աշխարհա-
գրութեան և գրականութեան հետ:

Հոկտեմբերի 6-ին, երեքշաբթի գիշեր, Հաւա-
քարի Զորաբաշի եկեղեցու ռուսամիաբանում ժո-
ղով կայացաւ մի քանի ռուսացիներից: Ժողովի
նպատակն էր՝ ռուսամիաբանը մեծացնելու և նրա
գրութիւնը լաւացնելու համար դիմել ժողովը-
ղին, նրա թական օժանդակութիւն խնդրելով:

Շաբաթ օր, հոկտեմբերի 3-ին Փոխաբաշի
Գլխաւոր Կառավարութեան ապարանի գրաշա-
րներից մինը գալիս է եղել Վերայից: Յանկարծ
վրա են թափվում աւագակները և խրում են ար-
ծարթեալ դռան, մանապէս և գրական էլ կրա-
ւում են, տոնում: Այդտեղ կանգնած է լինում
մի պոլիցման, որ աւելորդ է համարում օգնու-
թիւն հասցնել խեղճ թաղանթած գրաշարին:

Մեզ պատմում են որ հաւաքարից մի կին այս
օրերս ծնել է երեք հաս աղջիկ: Երեքն էլ կեն-
դանի և առողջ են, մայրն էլ անվնաս է և ա-
ռողջ:

Մեզ ծանօթ մի հայ երիտասարդ, այս օրերս
պատահմամբ այցելել է Թիֆլիսի չրջակայ մի
քանի հայ գիւղեր: Այդ գիւղերի բնակիչները
հայեր են, բայց վրացախոս: Երբ երիտասարդը
հարցրել է գիւղացիներից մի քանիսներին թէ՞

ինչի հայերէն չեն սովորում, ամենքի պատաս-
խանը հետեւեալն էր: «Մենք միշտուր չենք, այլ
մեղաւոր են մեր պապերն ու հայրերը: Իսկ այժ-
մեան ռուսւմ ստացածները, նոյն իսկ մեր գիւ-
ղացի երիտասարդները, մեր զաւակները, որոնք
քաղաքում ուսում են առել, այլ ևս արհամար-
հում են վերադառնալ գիւղը և մեզ համար ու-
սումնարան բանալ: Եթէ մեզ սովորեցնէին, մենք
մեծ ուրախութեամբ կը սովորէինք մեր մայրե-
նի լեզուն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

«Навразъ» լրագրի մէջ կարգում ենք
հետեւեալ յօդուածը, որ շարունակութիւն
է նոյն լրագրից «Մշակի» մէջ արտաստված
«Քիւրդերը և շէյխ Իրադուլլահ» վերնա-
գրով յօդուածին:

Յայտնի է, որ երեք տարի առաջ կապ-
ված Բերլինի դաշնագրի հիման վրա, Բարձ-
րագոյն Գուռը պարտաւորվել է «անյապաղ
իրագործել բարեկաւութիւններ և վերանո-
րագութիւններ, որոնք հայերով բնակեցրած
նահանգների համար պահանջ են դարձել և
ապահովել նրանց չեղքեցնելի և քիւրդերի
դէմ»: Մինչև այժմ այդ պարտականու-
թիւնը ոչ թէ միայն կատարված չէ, այլ
մինչև անգամ չեն սկսել նրան իրագործել
և ներկայումս թիւրքաբնակ հայերի դուռ-
թիւնը աւելի փառ է, քան թէ երբ և իցէ:
Վերջիշեալ յօդուածի իրագործման ուշա-
նալը հարկ չը կայ մեկնել Բ. Գրան չը կա-
մուծեամբ՝ մտցնել վերանորոգութիւններ
յօդուած քրիստոնեայ ազգաբնակութեան
կայսերութեան վարչական կողմից չափա-
զանց անուշադիր թողած մի մասում: Աւե-
րի իրաւացի և ճիշդ կը լինէր, եթէ այդ
յապաղումը մեկնէինք արտաքին ահաբի-
ղութարարութիւններով, որոնց պատճառեցին
Թիւրքիային յուսկան և չերնօգորիական
խնդիրները և ներքին դժուարութեամբ
հայկական խնդիրը բաւականացուցիւ կերպով
լուծելու համար: Բայց այժմ Չերնօգորիայի
սահմանները վերջնականապէս որոշված են:
Յունական սահմանական խնդիրը գրեթէ
վերջացած է: Թիւրքաբնակ հայերի իսկա-
կան վիճակի վերաբերութեամբ բաւական
առատ տեղեկութիւններ են հաւաքված:
Պահանջված վերանորոգութիւնների իսկա-
կան բնաւորութիւնը որոշված է և այդ

պատճառով առիթ չը կայ գործը յետա-
ձգել, մանաւանդ որ գործի ուղացնելը և
յետաձգելը բաւական փառաւոր է: Եւրո-
պայի հասարակական կարծիքը և Կ. Պոլսի
մէջ գտնվող մեծ պետութիւնների ներկայա-
ցուցիչները անհրաժեշտ են համարում, որ
Բ. Գուռը իրագործէ իր վրա արած միջ-
ազգային պարտաւորութիւնները, որոնք ի
նկատի ունեն փոքր-Ասիայում բնակվող նրա
քրիստոնեայ հայտականների ծանր և անա-
նիկ վիճակի բարւոքումը և պէտք է յու-
սայ, թէ սուլթանի խորհրդատուները վեր-
ջապէս այն եզրակացութեան կը հասնեն,
որ Հայաստանի մէջ վարչական վերանորո-
գութիւնների մտցնելը անպայման անհրա-
ժեշտ է նոյն իսկ Թիւրքաց շահերի հա-
մար և, մինչև անգամ կարելի է ասել,
Թիւրքիայի ամբողջութեան համար այն չա-
փերով, որ նա այժմ ունի: Ինչ կը վերա-
բերի հասարակական կարծիքին, նշանաւոր
է այն հանգամանքը, որ դեռ անցեալ տա-
րի Մ. Ֆ. Սալի խմբագրութեամբ Վիէնայի
մէջ հիմնված է մի շաբաթաթերթ Փրան-
սիերէն լեզուով, որի գլխաւոր նպատակն է՝
ծանօթացնել եւրոպական հասարակութեանը
հայկական գործերի հետ և խոստացած
վերանորոգութիւնները Հայաստանի մէջ
մտցնելու մասին կատարվող բանակցութիւն-
ների ընթացքի հետ: Այդ շաբաթաթերթը
պաշտպանում է հայկական խնդիրը և հա-
մակութեամբ ընդունված է:

Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգու-
թիւնների գործի դրութեան մասին, կը
նկատենք, որ ներկայ տարվայ յունիսին ան-
գլիական առաջին մինիստրը յայտնեց պար-
լամենտի մէջ, թէ, նրա կարծիքով, այդ
հարցը նոյնքան նշանակութիւն ունի, որ-
քան չերնօգորիական և յունական սահման-
ների ուղղելու հարցը և թէ լորդ Կեօֆե-
րինին տուած հրահանգներից մէկը մէջ
առված է, որ նա պարտաւոր է գործը դնել
իր եռանդը և ազդեցութիւնը հայկական,
այդ չափազանց նշանաւոր խնդրի լուծելու
համար: Մեր գեապանի Կ. Պոլսի վերա-
դառնալուց յետոյ, ինչպէս հայդրդում են
լրագիրները, նրա առաջին գործը եղել է
խորհուրդ տալ սուլթանին առանց յապաղ-
ման անհրաժեշտ վերանորոգութիւնները
մտցնել թիւրքաց Հայաստանի մէջ: Այնու-

դուրս թուշը, հրապարակ ելնէր, և մերկացնելով
կուրծքն հայրենասուէր և մղուէր ընդհանուր մա-
քառման և պատերազմի մէջ, կամ յաղթել իւր
հետ ունենալով միայնակ արդարութեան ու ճշը-
մարտութեան սիրամար գաղափարաց նախատակ-
ներու պաշտպան նախախնամութիւն մը, և կամ
ընկճել ու փշուրել բոլորովին խորտակելով իւր
հոգւոյ ու կենաց հետ և իւր սրտի բաղնիքներն
ու իւր մտաց բողբոջներն:

Ահա տոյն օրինակ ծանրագին պարագաներով
ու պայմաններով չրջապատուած պատերազմի ու
մաքառման դաշտը ի՛նչաւ ձեռն աշխատակիցն պ.
Գ. Նիկողոսեան, պատերազմի՞ ուր պէտք ան-
հրաժեշտ էր ոչ միայն մտքի ու հոգւոյ կորով և
ոյժ, այլ և ւսուրդ, որովհետեւ իւր ձեռնարկն այն-
քան դժուար ու ծանր էր, մտաց մաքառումն
ու ընդհարումն այնքան սերտ կապակցութիւն
ունէր նաև անձնական պատուոյ հետ, որ ինք-
նաճանաչ մարդին ամենանուիրական կրօնքն է
ասենք, չենք սխալի. հետեւաբար դիւրին է են-
թադրել թէ՞ այսպիսի մի հայրենասէր երիտա-
սարդ զինուորականի համար մահու և կենաց
խնդիր մ'էր այս: Թէ ինչ արիւնթեամբ և յա-
ջողութեամբ առաջ տարաւ իւր գործն ձեռն աշ-
խատակիցն, թէ որչափ ուժով ցնցեց ու սթա-
փեցուց այստեղի տարտամ, ինքնահաւան և ապի-
կար գործողներն, ինչ մնծ ու խոշոր ազգային
վերքերու վրայ դրաւ նա իւր մատն, վերքեր,
որոնք դեռ ևս ծածուկ ու գաղտ մնալով գուցէ
մի օր չը պիտի յապաղէին մահաւորի՞ գանգրէն
դառնալ և ասիականութիւններն տարածել ազգի

ամբողջ մարմնի մէջ, որոյ մասին փտած եմ
թէ Վշակ ի խորագրութիւնն բաւական հը-
մուտ է, և սերտած է այս բոլոր դարցուած-
ներն:

Կ. Պոլսոյ գաղթական հայ հասարակութիւնը
տեսնելով ձեռն աշխատակից յարգելի պարոնին
այսքան ծանր, տաժանակիր բայց ջերմ ազգա-
սիրական քաջամարտութիւններ, շատ չուտ գնա-
հատեց ձեռն բարեկամ և դրօշակիրն: Բիւր հա-
մակարանք բոլոր անոնցմէ որք ազգին լուրջ մա-
սը կը կազմեն, և սակայն իբրեւ զգործիչ չեն
ճանաչուած, որովհետեւ այսպիսի մտային մի
անխիղճանութեան մէջ գողցես քէն քան ըրած անան-
նակի կապերն: Սակայն հասարակութիւն
ընելով դուք չը հասկանաք միայն այն խօսքով
ազգասէր ճանչցուած ապիկար զգործիչներն, ո-
րոնց հետ էր պ. Գրիգոր Նիկողոսեանի հաշի-
ւներն: Հասարակութիւն ընելով չը հաս-
կընաք մի խումբ տիրացու մրտոդէներ, որոնց
ձեռքն է այժմ մեծաւ մասամբ Կ. Պոլսի հրապա-
րակը, հայ միտումը խորագրութիւնն, որն որ
փոխանակ առողջ զապափարներ ու կարծիքներ
տարածելու, աւանդ, հազար աւանդ, ապականեցու-
ցիչ շաւղի ու ընթացքի մէջ կը գտնուի այսօր:
Հասարակութիւն ընելով չը հասկընաք
նոյնպէս այն ինքնակոչ և ֆէնդիքի երբ, որոնք
դեռ երէկ հակիթը ձեռքեղով դուրս եկած, հա-
ղար ու մէկ ստոր ազգակործան միջոցներով
հարստութիւն դիզած ու դիւրք են վաստակած,
Հասարակութիւն ընելով չը հասկընաք
այն փառած ու բթացած անծրագիր ու անպրօք-

րամ վարժապետներն, որոնց ձեռքն է այսօր
մատաղ սերունդին դատարարակութիւնը: Ոչ եր-
բէք, հասարակութիւն ընելով չը հասկը-
նաք ոչ մին և ոչ միւսն այս նեխուած ու վա-
րակուած դասերն, այլ հասարակութիւն
ընելով հասկընէք այն հարիւր հազարաւոր ան-
տէր անտէրունջ ու անխնամաբան միջին դաս
ժողովուրդը՝ որոնք կը կազմեն իւրաքանչիւր
ազգի արմատն ու բունը, ահա ժողովրդեան այս
ուժեղ և ստուար մասն էր որ այնքան սփոփանք,
համակրութիւն և երախտիք գզաց դէպի ձեռն պա-
տուարման աշխատակիցն, որ երբ մի լրագիր
սկսաւ հայհոյանք թափել պ. Նիկողոսեանի
վրայ, ահա այդ օրէն գրեթէ ստորագրել իւր
անկման դատաւճիւրը, որովհետեւ զայրացուց
այդ միջին դասը, որն որ կը կարգայ հայ լրա-
գիր ու թիւթ: Մի և նոյն ջերմ համակրանքն
տեղի կունենայ գրեթէ իւրաքանչիւր դէպքի
մէջ երբ կերելի պ. Նիկողոսեան, ու երբ երես
առ երես կը հանդիպի այդ ժողովրդի հետ, ո-
րի փայլուն ապացոյցներն մին կրնայ նկա-
տուել Գումգաբուի միացեալ հնգից վարժարա-
նոց պարգևաբաշխութեան հանդիսական օրն,
ուր՝ երբ պ. Նիկողոսեան բոժ բարձրացաւ խօ-
սելու համար, հազարաւոր ժողովրդաց աչեր
դէպ այն կը հայէին, և որ կրկնակի ծափահա-
րութեամբ կողջունվէր ամենուր: Նոյն համա-
կրութեան ապացոյցներէն մին ևս յայտ եկաւ
այս օրեր, ինչպէս կիմանայիք ժողովրդային երի-
տասարդ խմբեր քանիցս սպառնացած են Վա-
սիսի խմբագրութեան դէմ, դադար տալ իւր

հայհոյանաց որ կը լրագրէ պ. Նիկողոսեանի
դէմ, եթէ չուզէր որ հանդիպի ժողովրդական
զայրութիւն և պատժոյն, ինչպէս օրինակն տե-
սաւ ուրիշ լրագրի վրայ:

Արդ, ինչ հետեւանք և ինչ եզրակացութիւն այս
ամենքէն. բնական է գիտնալ որ պ. Նիկողո-
սեան իւր ամբողջ յօդուածներով, իւր բոլոր
խիտաւ, կծու և անխնայ քարկոնքներով ու
քննադատութեամբ ապացոյց տուաւ որ Կ. Պոլ-
սոյ հայ ժողովուրդը իւր զօրեղ գերակշու-
թեամբ գիտէ գնահատել, գիտէ նաև սիրել ու
յարգել այն արի և հայրենասուէր մարդը, որն
որ ջատագով ու փաստաբան կը կանգնի իւր
նուիրական շահերուն և ապառնի բարեաց
կուրծք տալով, նաև ժայթքելով իւր բոցն ու
կրակ յայտնուս և յայնկոյս անխորի. ընդդէմ
անսիրտ և անխիղճ մատուի և կարծեցեալ զօր
միջնորդ: Հաւատալ պէտք է թէ հասարակ
միջին դաս ժողովրդեան շինարարներն և բար
ու առողջ սիրտը աւելի լաւ գիտէ որոշել իւր
իսկական անկեղծ բարեկամներն չողովուրդ, կեղծ
կեղտու, խաբեբայ և թմբկաբաշխ ներքալական
ներէն: Այսու նկատմամբ ձեռն աշխատակից
պարոնը կրնայ կատարելապէս վարժապետված
համարել զինքն, որ Կ. Պոլսոյ միջին հայ ժո-
ղովուրդը այսքան կանուխ գնահատեց և լրացի
նուիրեց իւր համակրանք ու սիրտ իւր իրողա-
նուստնայ արհեստակցին, որ համարձակութիւն
ունեցաւ նա ջախջախել անսիրտ ու անխիղճ
կարծեցեալ փրկիչներու դուռներն, որոնք
հազար և մէկ չարամտութիւններով դեղուած

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԳԻՐՁԱԿ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՇՈՒՇԱՆԻԿ ԱՆՆԱՆՑ-
ՆԵՐԸ Իրանց խանութը տեղափոխեցին Կու-
կիայ ՄԻՒԱՅԻՈՎՍԿԻ ՓՈՂՈՑ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈ-
սեանցի շինութեան մէջ, որտեղ ընդունում
են կանանց ամեն տեսակ ՀԱՊՈՒՍՏՆԵՐԻ
ՊԱՏՈՒԹԵՐՆԵՐ:

Նոյն տեղում ընդունում են ԱՇԱԿՆԵՐՏ-
ՆԵՐ ձեռնառն պայմաններով: 3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Երեխայական ԼՕՏՕԹԻՖ
լիստ րէալական ուսումնարանի հայ-աշա-
կերտների հրատարակութեամբ: Վաճառ-
վում է (յոգուտ նոյն դպրոցի աշակերտաց
ապագայ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ-
ՆԻ) ԿՈՎԿԱՍԵԱՆ, ԿԵՆՏՐՕ-
ՆԱԿԱՆ գրադաճառանոցներում և Կու-
կիայի կամրջի վրա պ. Մարտինեանցի խա-
նութեամբ: Գինն է 50 կոպ: 4—6

ՌՈՒՍԱՅ ՍԱՊՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԿՐԱԿԻ ԳԷՄ ապահովում է շինութիւններ,
ապարանքներ, պահեստներ, գործարաններ,
գիւղատնտեսական շինութիւններ և մը-
թերքներ: Կովկասի համար գործակառար
Պ. Պ. ԲԵԺԱՆԲԵԿ: Գրասենեակը գտնվում է
Երևանայայ հրապարակի վրա քաղաքային
տան մէջ առաջատան 10—2 ժամը և երե-
կոցիան 6—8 ամեն օր: ՓՈՒՊՈՐԹԱՅԱՏԱՐ-
ՆԵՐ. Գույքայինում Հ. Պ. ԲԷՃԱՆԲԵԿ, Գու-
թի Ի. Գ. ՀԱՍԱՆ-ՋԱՆԱԼԵԱՆ, Ախալցխա
Պ. ՋԱՅԱԼԻՍԵՎ: Նոյն տեղը ապահովում
են ներքին 50% առաջին և երկրորդ փոխա-
ռութեան ՏՈՄԱԿՆԵՐԸ 55 կ. Ս. Պետեր-
բուրգի Ի. Վ. ԻՆԿԵՐ բանկային տան յան-
ձնարարութեամբ: (Հ. Շ.)

144 Արծրունու գաւերէա 144
ամենախիտ պահեստ
մերկի և հայելիներով

ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԷՅ ԳՈՐԾԱ-
ԾՈՂՆԵՐԻՑ ԽՆԴՐՈՒՄ ՆԵՔ
ուշադրութիւն դարձնել, որ բանդերայի-
րի վրա անպատճառ ԼԻՆԵՆ Կ. և Ս-
ՏԱՌԵՐԸ:

Կ. և Ս. ՊՈՊՈՎ ԵՂԲԱՅՐԵՐ
Առևտրական տուն ՄՕՍԿՎԱՅՈՒՄ:
9—14

Մամուլի տակ է և մինչև սեպտեմբերի
վերջը լոյս կը տեսնի մեր տպարա-
նում պ. Աղայեանցի ԱՂԲԵՆՆԱՐԱՆԸ
չորրորդ տպագրութեամբ և նորանոր
յաւելում ածուցող փոփոխու-
թեամբ: Գինն է հատով գնողների հա-
մար 20 կոպէկ, իսկ գրադաճառներին և
հարկւրով գնողներին 25% զիջում կը լի-
նի: Ցանկացողը կարող են գիմել մեզ մեր
տպարանի հասցէով:

Մովսէս Վարդանեանց
4—5

ՅՐԱՆՍԵՐԵՆԻ և ԻՏԱԼԵՐԵՆԻ դասեր:
ՀԱՐՑՆԵԼ "ՄՇԱԿԻ" խմբագրութեան
մէջ:

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՀԱ-
ՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ԹԷՅ
լաւ տեսակի Փուշար 1 ր. 20 կ. և 2 ր.
և համեմատեան առաջին 1 ր. 60 կ. հետ
և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖ-
ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական ԳԵՐԱՉԱՆ-
ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական
խանութը կը ունի է ՄԱՔՈՒՐ ԹԷՅ
առանց ԹՂԹԻ և ԱՐՃՃԻ:

63—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԳԱՆ ԹԻ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբա-
ներ, կոնֆետներ, ԿԱԿԱՕ, բրինձ, Ա-
ՄԱՆԵՂԷՆ, բոկալներ, թասեր, երես լուա-
նայու ամաններ, չայնիներ, ԲԱՃԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (սյաքս), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԻՔՆԵՐ, ԳԱՆԱԿՆԵՐ, գդալներ,
ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԷՂՈՂԱՆԵՐ, այլոճ-
ներ, ՄԱՀԱԿԱՆԵՐ, ՀԱՊՈՒՍՏ, տրիկո, պա-
րուսին, թաշկինակներ, երեսբիներ, կեծն-
կա, գուլարներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՅՆ, խե-
րես, կոնեակ և այլն: ԹԷՅ մեծ քանակու-
թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԿԸ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:
Մի և նոյն տեղը էժան գտնվ. ՇԵՐԲԵՏ մա-
գնեցիկ, խմոր ԾԱՐԱՆԻ ԳԷՄ, ԽՆԱՅԻ ԳԷ-
նի ջերմի ԳԷՄ, կարթոսիան ՓՕՇԻ, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ փաթեթով
տի համար, պարսկական փոշի: 82—100

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
դասեր ընտանիքներում: ՀԱՐՑՆԵԼ "ՄՇ-
ՇԱԿԻ" խմբագրութեան մէջ:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ
քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաօ, ՇՕԿՈԼԱԿ,
բիսկիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ,
բաժակներ, բոկալներ, թէյյամաններ, սու-
ղոններ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանայու
ամաններ, ԿՈՂՊԻՔՆԵՐ, ԶԻՆՍԱԿԱՆՆԵՐ,
գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ,
ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱ-
ՑԱՆԵՐ, ԲԷՂՈՂԱՆԵՐ, մէջքակապներ,
կէծնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուժծներ, ՄԱՀ-
ՃԱԿԱՆԵՐ, երեսբիներ, թաշկինակներ,
կանանց գուլարներ, մարգիւրանց գուլարներ,
տուարեան սպգոն, հոտաւէտ ջրեր, շերքետ,
ցիտրան մագնեզիա, խինայի զինի, պորտ-
վէյն, խերես, կոնիակ և 1,000 այլ առա-
կաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականնե-
րին ՄԵԾ քանակութեամբ ծախվում է
ԹԷՅ. պուրբրով 40, 46, 52, 58, ր.,
իսկ Փուշարով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20
կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80
կ., իսկ ամենաբարձր թէյը Փուշար 2 ր.
քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՕՐ
(chokl bore) George Dau-ի գործարա-
նից 120 ր., բէվոլփներ 4—34 ր., ԲՈՒԼ-
ԳՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամ-
բեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50
կ. զիւժներ, այլոճներ կիսալոնով, Փիլար-
ներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացան-
ների և բէվոլփների թիֆլիսում:
27—100

Դուրս եկաւ մամուլի տակից պ. Ղ. Աղայեանցի մի նոր
աշխատութիւնը

Ա Ն Ա Հ Ի Տ

ՀԻՆ ԶՐՈՅՑ, ԲՆԹԵՐՑԱՄԻՐ ՊԵՏԱՆԻՆԵՐԻ
ՀԵՄԵՐ: Գինն է 50 կոպ. ցանկացողը կարող են գիմել
մեզ մեր տպարանի հասցէով:

Մովսէս Վարդանեանց

Դուրս եկաւ մամուլի տակից Գ. ԱՂԱՅԵԱՆՑԻ
Ե Յ Բ Բ Ե Ն Ե Ր Ե Ն ՉՈՐՐՈՐԻ ՏՊԵՐՈՒ-
ԹԵՒԱՐ ԵՒ ՆՈՐԱՆՈՐ ՅԵԼԵԼՈՒՇՈՎՈՎ ՈՒ
ՓՈՓՈԽՈՒԹԵԼՄԻ: Գինն է հատով գնողների համար
20 կոպէկ, իսկ գրադաճառներին և հարկւրով գնողներին
25% զիջում կը լինի: Ցանկացողը կարող են գիմել մեզ
մեր տպարանի հասցէով:

Մովսէս Վարդանեանց

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿՈՑ ԴՈՐՍ ԵԿԱԻ Գ. ՍՈՒՆԴՐՈՒԿԵԱՆՑԻ Խ Ա Թ Ա Բ Ա Լ Ա (նոր մշակած) Ծախվում է Կինորեանկան և Կովկասեան գրադաճառանոցներում: Գինն է 50 կոպէկ: 11—15	ԵՐՈՒՆԵԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ ՅԱԿՈՒ ՏԵՐ-ՑՈՎ ՀԱՆՆԻՍԵԱՆ Այժմ. բնակվում է Սոլոյակ, Սաղոյի փողոցում, Մարգարիտի տանը N 31: 4—5
---	---

Մամուլի տակ է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանգիլեանի հետեւալ
աշխատութիւնը. "ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ
ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ" ծխական դպրոցների 4-դ տարվայ դասընթացը,
և միանգամայն 1-ն, 2-դ և 3 տարիների համար հրահանգ:

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՐԵԱԼ ՀԱՅՆԵՐԻ ԴԱՍԱԳՐԵՐԸ	
1 Տէր-Ղ. Կոնստանտին Մայր. լեզուի մ. ա.	35 4
2 — — — — — մ. բ.	40 "
3 — — — — — մ. գ.	70 "
4 Ս. Մանգիլեանց՝ Նահագնական և հայր. աշխարհ.	65 "
5 — — — — — Կիւցաղական աշխարհ.	30 "
6 — — — — — Ընտանեկան աշխարհ.	25 "
7 Կոստանեանց՝ Ծաղկաբայ արձակ և չափածոյ բանից.	25 "
8 — — — — — երկրորդ շրջան.	60 "
9 — — — — — երրորդ շրջան.	40 "
10 Աղայեանց՝ Ուսումն մայր. լեզուի ա. տ.	15 "
11 Նազարեանց՝ Ուսուցիչ՝ Հայոց լեզուի գ. տարի.	40 "
12 — — — — — չորր. տարի.	60 "
13 Ա. Վաղանց՝ Նախալրթանք գրաբ. լեզուի մ. ա.	40 "
14 — — — — — մասն երկր.	45 "
15 — — — — — մասն երր.	50 "
16 Եղիշէ՝ պատմութիւն Վարդանանց.	80 4. և 1
17 Եղիշէ՝ եղծ աղանդոց.	1 —
18 Բագրատունի՝ Տարերք քերականութեան.	1 25 "
19 Պայտան՝ Քերականութիւն աշխ. լեզուի.	55 "
20 Բահայեանց՝ Քերական. աշխ. լեզուի.	20 "
21 Տէր-Ստեփանոսեանց՝ Սկզբունք քրիս. հաւատ.	50 "
22 Պոպովեան՝ Սրբազան պատ. հին կտակարանի.	60 "
23 — — — — — նոր կտակարանի.	60 "
24 Հէնչէ՝ Թուարանական խնդ. ժողովածու (Ս. Մանգ.)	40 "
25 Վարձեկան՝ Դասագիրք թուարանութեան.	70 "
26 Русское слово սէր. լաւութեանի.	45 "
Ամենատեսակ ուսերէն լեզուի ձեռնարկներ:	
27 Սիմոնեանց Ն. Ընդհ. աշխարհագրութեան նախագիր.	35 "
28 — — — — — նոյն մասն ուսումնական.	60 "
29 — — — — — նոյն մասն քաղաքական.	60 "

Նոյն տեղը վաճառվում են նաև այն գործածական դասագրքերը, որոնք այս յայ-
տարարութեան մէջ չեն յիշատակված: Բացի սորանից՝ Կենտրոնական գրադաճառանո-
ցին կից բացում է նաև ուսումնարանապատկան և կանցեյարիական ամենատեսակ իր-
դենների առանձին բաժանմունք: Գաւառական ուսումնարանների պահանջները կատար-
վում են առանց յետաձգութեան: Գումարով գնողներին նշանաւոր զիջում է լինում:
Ան փոքր պատու է բնեւրն անկատար են մնում: